

**ՍԿԱՌԼԵՏ ՏԻՊԻ ԲԱԴՐԻՋԱՆԻ SOLANUM SISYMBRIIFOLIUM
LAM ՏԵՍԱԿԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՆՈՐ ՍՈԼՍԻՍ ՍՈՐՏԻ ՀԱՄԱՌՈՏ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԿԱՐԻՆԵ ՍԱՌԻԿՅԱՆ

Միրնազգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի բաժնի վարիչ,
ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական
կենտրոն,

0808 Արարատի մարզ, գ. Դարակերտ, Դ.Լադոյան փ. 38
PhD, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու,
karuine_sarikyan@mail.ru | karinesarikyan@gmail.com

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Միրնազգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի բաժնի կրտսեր
գիտաշխատող, հայցորդ, ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական
մշակաբույսերի գիտական կենտրոն,

0808 Արարատի մարզ, գ. Դարակերտ, Դ.Լադոյան փ. 38
marine.job5@mail.ru

DOI: 10.54503/978-9939-481-23-4-481

Համառոտագիր

Solanum sisymbriifolium-ը՝ որպես բադրիջանի վայրի ազգակից, ներառված է Սկառլետ կամ Կարմիր բադրիջան տիպի մեջ: Այն ոչ միայն արժեքավոր գենետիկական ռեսուրս է բադրիջանի սելեկցիայում՝ նոր սորտերի և հիբրիդների բուծման գործընթացում, այլև հիանալի դեղաբույս է:

Սկառլետ (Կարմիր) նոր Սոլսիս սորտի բուծումը կատարվել է Անհատական ընտրություն- Մաքուր գծային ընտրություն, «Մեկ սերմի օգտագործում» SSD մեթոդով, բադրիջանի վայրի, Սկառլետ /Կարմիր/ տեսակին (*Solanum sisymbriifolium Lam* պատկանող MA-284 նմուշից, որը ինտրոդուկցվել է Հայաստան մեր միջոցով՝ 2004թ.-ին INRA-ի գենբանկից՝ Ֆրանսիայից:

Սորտի ստացման ժամանակ խնդիր է դրվել առաջին անգամ հանրապետությունում ուսումնասիրել կարմիր բադրիջանի այս տեսակը, որն աչքի է ընկնում վաղահասությամբ, ցրտադիմացկանությամբ, գեղեցիկ վերգետնյա զանգվածով և կարմիր պտուղներով, հետերոզիգոտ պոպուլյացիայից ընտրել լավագույն գծեր, որոնք կարող են բուծվել, որպես կայուն սորտեր, հետագայում՝ տրամախաչումների ցանկում ընդգրկելով նրանց լավագույն գեները (հատկապես գերվաղահաս և ցրտադիմացկուն) ներմուծել նոր սորտերի մեջ:

Սերմերի ծյումից մինչև առաջին բերքահավաքը կամ պտուղների տեխնիկական հասունացումը տևում է 98 օր, իսկ պտուղների կենսաբանական հասունացումը՝ 118 օր, իսկ վեգետացիայի ավարտը՝ 78 օր: Թփի բարձրությունը կազմում է 145,5 սմ: Թուփը՝ ցողունը, տերևները, կոկոնները, ծաղիկները, պտուղները, ամբողջովին պատված են խոշոր փշերով: Բույսը կանգուն է, դետերմինանտ: Ծաղիկները սպիտակավուն են: Տերևները խոր կտրտված են: Պտուղները մանր են, մինչև 10գ. միջին զանգվածով: Պտուղները ողկույզով

են, մեկ ողկույզը պարունակում է մինչև 6 պտուղ: Պտուղը և պտղամիսը ամբողջովին կանաչ են տեխնիկական հասունացման շրջանում, կարմիր՝ կենսաբանական հասունացման շրջանում: Պտուղը ունի 2-3 բուն: Այս տրտի ծաղկած և պտղաբերող բույսերը շատ գեղեցիկ են և առաջարկվում են մշակել դեկորատիվ նպատակներով, օգտագործելով վնասատուների դեմ, որպես բռնիչ բույս, էթնոդեղագործության մեջ՝ որպես դեղաբույս, իսկ բադրիջանի սելեկցիայում՝ որպես դոնոր՝ վաղահասության, ցրտադիմացկանության հատկանիշների փոխանցման ուղղությամբ: Բերքատվությունը կազմում է 380,5 գ/հա: Կանաչ պտուղները դառն են. խորհուրդ չի տրվում ուտել, իսկ կարմիր պտուղները հյութալի են, մորու կամ բալի համով, կարելի է կարմիր պտուղը սեղմելով սերմերը հանել, լվանալ և որպես դելիկատես մի քիչ ճաշակել: Պտուղները պարունակում են 9,2% չոր նյութեր, 4,2% շաքարներ, 6,55նգ% վիտամին “C”, “B” խմբի վիտամիններից՝ թիամին(B1)՝ 4.33 մկգ/մլ, պիրիդոքսին(B6)՝ 10.28 մկգ/մլ, պանտոտենաթթու(B5)՝ 110.45 մկգ/մլ, նիկոտինաթթու(PP)՝ 70.95 մկգ/մլ, ինոզիտոլ(B8)՝ 3685.2 մկգ/մլ, 0,42% տիտրվող թթվություն և անթոցիաններ: Համեմատաբար դիմացկուն է միջավայրի շոգ պայմանների, տարածված հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:

Սերմնաբուծության համար օգտագործվում են սուպերէլիտային և էլիտային սերմնանյութ, որոնց ստացման տեխնոլոգիան համընդհանուր է սմբուկի համար նախատեսված մեթոդական ցուցումներին: Սերմնաբուծության համար նախընտրելի գոտիները՝ Արարատ, Արմավիր, Տավուշ, Վայոց Ձոր, Արագածոտն, Սյունիք:

Սորտը նորույթ է մեր հանրապետությունում, իր գերվաղահասությամբ և ցրտադիմացկանությամբ առաջինն է բադրիջանի գենոֆոնդի մեջ: Առաջին անգամ առաջարկվում է սովորական մշակովի բադրիջանների հետ նոր տեխնոլոգիայով համատեղ, ինչպես նաև որպես դեղաբույս և դեկորատիվ բույս մշակելու համար հանրապետության բոլոր մարզերում և գոտիներում:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ սկառլետ բադրիջան, վայրի տեսակ, սորտ, նկարագրություն, մորֆոլոգիական հատկանիշներ:

BRIEF DESCRIPTION OF THE NEW SOLSIS VARIETY OF THE SCARLET TYPE EGGPLANT *SOLANUM SISYMBRIIFOLIUM* LAM SPECIES

KARINE SARIKYAN

Head of the Department of Breeding and Cultivation Technology of Solanaceous Crops
Scientific Centre of Vegetable and Industrial Crops ME RA
PhD of Agricultural Sciences
0808 D. Ladoyan Str. 38, Darakert village, Ararat region
karuine_sarikyan@mail.ru | karinesarikyan@gmail.com

MARINE GRIGORYAN

Department of Breeding and Cultivation Technology of Solanaceous Crops,
Junior researcher,
Scientific Centre of Vegetable and Industrial Crops, ME RA, PhD Applicant
marine.job5@mail.ru

Abstract

Solanum sisymbriifolium, as a wild relative of eggplant, is included in the Scarlet or Red eggplant type. It is not only a valuable genetic resource in the process of breeding new varieties and hybrids in eggplant selection, but also an excellent medicinal plant.

The breeding of the new Scarlet (Red) variety *Solanum sisymbriifolium* was carried out by the Individual Selection – Pure Line Selection, “Single Seed Use” SSD method, from the wild eggplant, Scarlet /red/ type *Solanum sisymbriifolium Lam/*, MA-284 sample, which was introduced to Armenia through us in 2004 from the INRA gene bank, France.

When obtaining the variety, the task was set for the first time in the republic to study this type of red eggplant, which is distinguished by its early maturity, cold resistance, beautiful aboveground mass and red fruits, to select the best lines from the heterozygous population, which can be bred as stable varieties, and later, by including their best genes /especially super-mature and cold-resistant/ in the list of crosses, to introduce them into new varieties.

From seed germination to the first harvest, or technical ripening of the fruits, it takes 98 days, and the biological ripening of the fruits – 118 days, and the end of vegetation – 78 days. The height of the bush is 145.5 cm. The bush, stem, leaves, cocoons, flowers, and fruits are completely covered with large thorns. The plant is erect and determinate. The flowers are whitish. The leaves are deeply cut. The fruits are small, up to 10 g, with an average mass. The fruits are in clusters; one cluster contains up to 6 fruits. The fruit and flesh are completely green during technical ripeness, red during biological ripeness. The fruit has 2–3 stems.

Flowering and fruiting plants of this variety are very beautiful. They are recommended for cultivation for decorative purposes, as a pest-control measure, as a catch plant, in ethnopharmaceutics as a medicinal herb, and in eggplant selection as a donor for the transfer of precocity and cold-resistance traits. The yield is 380.5 c/ha. Green fruits are bitter, so they are not recommended to eat, and red fruits are juicy, with a taste of blackberry or cherry flavour. You can squeeze the red fruit

to remove the seeds, then wash it and taste it as a delicacy.

The fruits contain 9.2% dry matter, 4.2% sugars, 6.55 mg% vitamin "C", from "B" group vitamins: thiamine (B1) 4.33 µg/ml, pyridoxine (B6) 10.28 µg/ml, pantothenic acid (B5) 110.45 µg/ml, nicotinic acid (PP) 70.95 µg/ml, inositol (B8) 3685.2 µg/ml, 0.42% titratable acidity and in green fruits: 4.67 (mass%), in red fruits: 7.63 (mass%) anthocyanins. Relatively resistant to hot environmental conditions, common diseases and pests.

Super-elite and elite seeds are used for seed production, the technology of obtaining which is universal to the methodological instructions for eggplant. Preferred zones for seed production: Ararat, Armavir, Tavush, Vayots Dzor, Aragatsotn, Syunik.

The variety is a novelty in our republic, with its super-ripening and cold resistance, it is the first in the eggplant gene pool. For the first time, it is offered in combination with conventionally cultivated eggplants, using new technology, and is also cultivated as a medicinal and ornamental plant in all regions and zones of the republic.

Keywords and phrases: Scarlet eggplant, wild species, variety, description, morphological characteristics

КРАТКАЯ ХАРАКТЕРИСТИКА НОВОГО СОРТА СОЛСИС БАКЛАЖАНА ТИПА СКАРЛЕТ ИЗ ВИДА *SOLANUM SISYMBRIIFOLIUM* LAM

КАРИНЕ САРИКЯН

Заведующая отделом селекции и технологии возделывания пасленовых культур
Научный центр овощебахчевых и технических культур МЭ РА
0808 Арагатский район, село Даракерт, ул. Д. Ладояна. 38
PhD, кандидат сельскохозяйственных наук
karuine_sarikyan@mail.ru | *karinesarikyan@gmail.com*

МАРИНЕ ГРИГОРЯН

Младший научный сотрудник, соискатель отдела селекции
и технологии возделывания пасленовых культур,
Научный центр овощебахчевых и технических культур МЭ РА
0808 Арагатский район, село Даракерт, ул. Д. Ладояна. 38
marine.job5@mail.ru

Аннотация

Solanum sisymbriifolium, как дикий родственник баклажана, относится к типу «Алый» или «Красный» баклажан. Он является не только ценным генетическим ресурсом в процессе селекции новых сортов и гибридов баклажана, но и превосходным лекарственным растением.

Выведение нового сорта «Алый» (Красный) *Solanum sisymbriifolium* было осуществлено методом индивидуальной селекции – отбора чистых линий, методом «однократного использования семян» (SSD), из дикого баклажана типа «Алый» /*Solanum sisymbriifolium Lam*/ образец MA-284, который был завезен в Армению нами в 2004 году из генбанка INRA, Франция.

При получении сорта впервые в республике была поставлена задача изучить этот тип красного баклажана, отличающегося ранним созреванием, морозостойкостью, красивой надземной массой и красными плодами, отобрать лучшие линии из гетерозиготной популяции, которые можно вывести как устойчивые сорта, а затем, включив их лучшие гены (особенно сверхзрелые и морозостойкие) в список скрещиваний, ввести их в новые сорта.

От прорастания семян до первого сбора урожая или технического созревания плодов проходит 98 дней, биологического созревания плодов – 118 дней, а окончания вегетации – 78 дней. Высота куста составляет 145,5 см. Куст, стебель, листья, коконы, цветки, плоды полностью покрыты крупными шипами. Растение прямостоячее, детерминантное. Цветки беловатые. Листья глубоко рассеченные. Плоды мелкие, до 10 г средней массы. Плоды собраны в грозди, одна гроздь содержит до 6 плодов. Плоды и мякоть полностью зеленые при технической зрелости, красные при биологической зрелости. Плоды имеют 2–3 стебля.

Цветущие и плодоносящие растения этого сорта очень красивы и рекомендуются для выращивания в декоративных целях, использования

против вредителей, в качестве промежуточного растения, в этнофармацевтике как лекарственное растение, а также в селекции баклажанов как донор для переноса скороплодности и морозостойкости. Урожайность составляет 380,5 ц/га. Зеленые плоды горькие, употреблять в пищу не рекомендуется, а красные плоды сочные, со вкусом ежевики или вишни; можно выжать из красных плодов семена, промыть их и попробовать немного на вкус как деликатес.

Плоды содержат 9,2% сухого вещества, 4,2% сахаров, 6,55 мг% витамина «С», витаминов группы «В»: тиамин (В1) 4,33 мкг/мл, пиридоксин (В6) 10,28 мкг/мл, пантотеновую кислоту (В5) 110,45 мкг/мл, никотиновую кислоту (ПФ) 70,95 мкг/мл, инозитол (В8) 3685,2 мкг/мл, титруемую кислотность 0,42% и в зеленых плодах: 4,67 (масс.%), в красных плодах: 7,63 (масс.%) антоцианы. Относительно устойчивы к жарким условиям окружающей среды, распространенным болезням и вредителям.

Для производства семян используются суперэлитные и элитные сорта, технология получения которых универсальна для методических указаний по баклажанам. Предпочтительные зоны для производства семян: Арарат, Армавир, Тавуш, Вайоц Дзор, Арагацотн, Сюник.

Этот сорт является новинкой в нашей республике, благодаря своей сверхспелости и морозостойкости он первый в генофонде баклажанов. Впервые он предлагается в сочетании с традиционными выращиваемыми баклажанами по новой технологии, а также для выращивания в качестве лекарственного и декоративного растения во всех регионах и зонах республики.

Ключевые слова и фразы: скарлет баклажан, дикий вид, селекция, сорт, описание, морфологические характеристики.

Ներածություն

Solanum sisymbriifolium-ը՝ որպես բադրիջանի վայրի ազգակից, ներառված է Սկառլետ կամ Կարմիր բադրիջան տիպի մեջ: Այն ոչ միայն արժեքավոր գենետիկական ռեսուրս է բադրիջանի սելեկցիայում՝ նոր տրոսերի և հիբրիդների բուծման գործընթացում, այլև հիանալի դեղաբույս է:

Solanum sisymbriifolium-ը լայնորեն հայտնի է որպես վիլա-վիլա, կաչուն գիշերային սովեր, կարմիր գոմեշի բուրմունք, կրակի և սառույցի բույս, լիչի լոլիկ կամ Morelle de Balbis:

Ընդհանուր անուններն են՝ Արգենտինայում՝ Cardo, comida de vibora, espina colorada, guidilla de campo, putui, montera caballos, tomatillo de campo (իսպաներեն), Հարավային Աֆրիկայում՝ Wildetamatie, tamatiedissel, digdoringbitterappel, doringtamatie (աֆրիկյան լեզուներ), Խիս փշերով դառը խնձոր, Վայրի լոլիկ (անգլերեն), Arrebenta-cavalo, mata-cavalo, joá Portuguese, joá-bravo, Կաչուն գիշերային ծածկոց (պորտուգալերեն) [1]:

Solanum sisymbriifolium-ը առաջին անգամ ներմուծվել է Միացյալ Թագավորության Ռոթեմստեդի հետազոտական կենտրոնի գիտնականների կողմից և ցույց է տրվել, որ այն նվազեցնում է վարակները 50-80%-ով: Իր բնական տարածքում *S.sisymbriifolium*-ը կարող է լինել արոտավայրերի լուրջ մոլախոտ: Հարավային Աֆրիկայում այն դասակարգվել է որպես վնասակար մոլախոտ. հավանական է, որ արևադարձային և մերձարևադարձային գոտիներում *S.sisymbriifolium*-ը կիսաբազմամյա բույս է, մինչդեռ չափավոր գոտիներում՝ միամյա:

Այն հիմնականում Հարավային Ամերիկայի չոր շրջաններից է, տարածված է Էկվադորից մինչև Արգենտինա: Ներմուծվել է աշխարհի արևադարձային և մերձարևադարձային շրջաններ և լայնորեն տարածվել է Հարավային Աֆրիկայի՝ Գաուտենգ, Հյուսիսարևմտյան, Մպումալանգա, Ազատ նահանգ, Կվազուլու-Նատալ և Արևելյան Բեյթի նահանգներում, Սվազիլենդի ու Բենիայի փերում [2]:

Solanum sisymbriifolium, որը հայտնի է որպես «Վայրի պոմիդոր», ավանդական դեղամիջոց է, որն օգտագործվում է բնիկների կողմից բուժելու անասնաբուժական և մարդու հիվանդություններ: Վայրի լուլիկի տարբեր մասեր են եղել լայնորեն օգտագործվում է բազմաթիվ հիվանդությունների կանխարգելման և բուժման համար, ներառյալ՝ հիպերտոնիան, փորլուծությունը, ինչպես նաև շնչառական և միզուղիների տրակտի վարակներ: Ժողովրդական բժշկության մեջ այն օգտագործվում է միզամուղ և մարսողական խնդիրների, ինչպես նաև գրիպի բուժման համար: [3]:

Արգենտինայում հատապտուղը համարվում է ուտելի և ունի հաճելի համ՝ բացառությամբ սերմերի, որոնք թունավոր են: Տերևները նաև օգտագործվում են բուսական բժշկության մեջ: Փոքր ուտելի պտուղները դրսից կարմիր են, ներսից՝ դեղին: Այն աճում է փշոտ, կանաչ կեղևի ներսում: Պտուղը հասուն է, երբ հեշտությամբ հանվում է ցողունից: Համը նման է թթու բալի և մի փոքր նման է լուլիկի [3]:

Solanum sisymbriifolium-ը մշակվում է որպես թակարդային մշակաբույս և օգտագործվում է կարտոֆիլի բույսերը կարտոֆիլի կիստային նեմատոդներից (PCN) պաշտպանելու համար, քանի որ դրանք մեծ վնաս են հասցնում կարտոֆիլի մշակաբույսերին Հյուսիսային Եվրոպայում: Ցողուններն ու տերևները պարունակում են սոլասոդին, որը շատ դիմացկուն է դարձնում բույսերին բազմաթիվ վնասատուների և հիվանդությունների նկատմամբ՝ բացառությամբ կարտոֆիլի բզեզների և լուլիկի եղջյուրավոր որդերի: Այն կարող է նաև օգտագործվել որպես ցանկապատի բույս՝ կենդանիներին այգուց հեռու պահելու համար, քանի որ այն ծածկված է փշերով [4]:

Հաշվի առնելով *Solanum sisymbriifolium*-ի կարևոր դերը սելեկցիայում և բժշկության մեջ՝ մեր կողմից առաջին անգամ ներկրվել և Հայաստանում լայնորեն ուսումնասիրվել է կարմիր բադրիջանի այս տեսակը, կատարվել են սելեկցիոն սերմնաբուծական աշխատանքներ: Արդյունքում բուծվել է Սոլսիս նոր սորտը, որը ներկայացվել է Պետական սորտափորձարկման և արտոնագրման:

Տեսանթողական հիմքեր

Քանի որ կլիմայի փոփոխության ներկայիս պայմաններում մորմազգի բանջարային մշակաբույսերի սելեկցիայի համար սելեկցիոներներին անհրաժեշտ է նոր ելանյութ, բազմապիսի գենետիկական ռեսուրսներ, բադրիջանի նոր սորտերի բուծման համար կարևորվել է վայրի տեսակների՝ մասնավորապես Սկառլետ, Կարմիր բադրիջանի *Solanum sisymbriifolium*-ի ուսումնասիրությունը: Այս տեսակի նմուշները ունեն բարձր դիմացկուն և ֆիտո-ինսեկտիցիդային միացություններով հարուստ բուժիչ բույսեր, էթնոբուսաբանական ու էթնոդեղագործական նշանակություն, որոնց շնորհիվ բուծում են տարբեր հիվանդություններ [5]:

Սորտի ստացման ժամանակ խնդիր է դրվել առաջին անգամ

հանրապետությունում ուսումնասիրել կարմիր բադրիջանի այս տեսակը, որն աչքի է ընկնում վաղահասությանը, ցրտադիմացկանությամբ, գեղեցիկ վերգետնյա զանգվածով և կարմիր պտուղներով, հետերոզիգոտ պոպուլյացիայից ընտրել լավագույն գծեր, որոնք կարող են բուծվել, որպես կայուն սորտեր, հետագայում՝ տրամախաչումների ցանկում ընդգրկելով նրանց լավագույն գեները (հատկապես գերվաղահաս և ցրտադիմացկուն) ներմուծել նոր սորտերի մեջ:

Կարմիր բադրիջանի այս տեսակի պտուղները Եվրոպական շուկայում ունեն գնողունակություն՝ որպես դելիկատեսային արտադրանք: Կարմիր պտուղներից անջատելով սերմերը, պտղամիսը, որն ունի մի փոքր դառնություն և մորենու պտուղների նման հաճելի համ՝ թարմ վիճակում ուտում են: Այս տեսակը օգտագործվում է նաև դեկորատիվ նպատակներով, այգիների և բանջարանոցների գեղեցիկ զարդարման համար, ինչպես նաև ծառայում է, որպես բռնիչ բույս. իր վրա է հավաքում մորմազգիների վնասատուներից կոլորադյան բզեզին և ազատագրում մշակովի բադրիջանի, կարտոֆիլի, պոմիդորի բույսերը այդ վնասատուներից **[5]:**

Քանի որ հանրապետությունում չկան շրջանացված սորտեր, առաջարկվող սորտը պետական սորտափորձարկման է ներկայացվել՝ որպես դեղաբույս ու դեկորատիվ նպատակներով օգտագործվող բույս և որպես առաջիններից մեկը աշխարհում վայրի հետերոզիգոտ պոպուլյացիայից բուծված հաստատուն սորտ և դոնոր: Սորտի մթերքը մեզ մոտ դեռևս չի օգտագործվում:

Սորտը կարելի է մշակել արտադրական մշակության մեջ մշակվող սովորական բադրիջանների սորտերի և հիբրիդների հետ՝ դաշտում գեղեցիկ դիզայնով տեղադրելով:

Ուսումնասիրության մեթոդներ

Ուսումնասիրությունները կատարվել են 2004–2024 թվականների ընթացքում ՀՀ ԷՆ Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի Դարակերտի փորձարարական տնտեսությունում՝ բաց դաշտի պայմաններում, ռոտզվող հողատարածությունում:

Ելանյութի ուսումնասիրությունը կատարվել է «Մորմազգի բանջարային մշակաբույսերի համաշխարհային հավաքածուի մեթոդական ցուցումներ»-ի համաձայն **[6]:**

Սկառլետ (Կարմիր) նոր Սոլսիս սորտի բուծումը կատարվել է Անհատական ընտրություն- Մաքուր գծային ընտրություն, «Մեկ սերմի օգտագործում» SSD մեթոդով **[7]:**

Նոր սորտի կենսաբանական, մորֆոլոգիական և տնտեսական արժեքավոր հատկանիշներն ուսումնասիրվել և բնութագրվել են բադրիջանի համար նախատեսված միջազգային նկարագրիչով **[8]:**

Նոր սորտի փորձարկումը կատարվել է Բանջարեղենի համաշխարհային կենտրոնի (AVRDC) սորտանմուշների՝ «Փորձարարական դիզայնի բլոկային ռոնդոմիզացիայի մեթոդական ցուցումներ»-ի համաձայն **[9]:**

Քանի որ հանրապետությունում շրջանացված չեն եղել այս տեսակին պատկանող կարմիր բադրիջանի այլ սորտեր, ուստի նոր սորտի փորձարկումները կատարվել են առանց ստուգիչ սորտի: Փորձարկումները կատարվել չորս կրկնությունների վրա: Հողի մշակումը և բույսերի խնամքը

կատարվել է միննույն ագրոֆոնում և միատեսակ, ընդունված տեխնոլոգիայով: Սերմերի ցանքը կատարվել է մարտի 20-30-ի, սածիլումը՝ մայիսի 15-25-ի միջև ընկած ժամանակամիջոցում, փորձամարզի մեծությունը՝ հավաքածուի տնկարանում՝ 10քմ, մրցույթային սորտափորձարկման ժամանակ՝ 20քմ: Սածիլները տնկվել են՝ (90+70)×30սմ, տնկման սխեմայով:

Ֆենոլոգիական դիտումները, կենսամետրիկ չափումները, հիվանդությունների նկատմամբ դիմացկանությունը, բերքի հաշվառումը, պտուղների գնահատականը կատարվել է «Բանջարաբուծության և բոստանաբուծության դաշտային փորձերի մեթոդ»-ով [10]:

Կատարվել են պտուղների կենսաքիմիական և կենսաակտիվ նյութերի անալիզներ: Պտուղներում՝ չոր նյութերը որոշվել են կշռային մեթոդով, շաքարները՝ ըստ Բերտրանի [11]: “C” և “B” խմբի վիտամինների՝ (թիամին(B1), պիրիդոքսին(B6), պանտոտենաթթու(B5), նիկոտինաթթու(PP), ինոզիտոլ(B8)), և հակաօքսիդանտային նյութերից (անթոցինանների) քանակը որոշվել է Cary 60UV-Vis սպեկտրոֆոտոմետրով (Agilent Technologies, ԱՄՆ) [12]:

Ստացված արդյունքները

Կատարված սելեկցիոն աշխատանքների շնորհիվ մեր կողմից բուծվել է Սկառլետ բադրիջանի նոր Սոլսիս սորտը, որի ստեղծման պատմությունը, կենսաբանական, մորֆոլոգիական, ագրոնոմիական, որակական և տնտեսական արժեքավոր հատկությունների, հատկանիշների ու ցուցանիշների նկարագրությունները բերված են ստորև:

Սորտի սելեկցիոն համարը՝ Գ-45

Բուսաբանական սահմանումը՝ Մորմազգիների ընտանիք, Մորմ ցեղ, Բադրիջան (Սմբուկ) տեսակ, Սկառլետ բադրիջան (սմբուկ) ենթատեսակ, *Solanaceae* Juss ընտանիք, *Solanum* L. ցեղ, Eggplant, *Solanum sisymbriifolium* Lam. տեսակ, Scarlet eggplant ենթատեսակ

Սորտի ստեղծման պատմությունը

1) սորտի համար սելեկցիոն աշխատանքների սկիզբը՝ 2004թ.

2) ստացման մեթոդը, ելանյութային ձևերը՝ Սորտը բուծվել է անհատական ընտրության մեթոդով, բադրիջանի վայրի, Սկառլետ (կարմիր) տեսակին (*Solanum sisymbriifolium* Lam) պատկանող MA-284 նմուշից, որը ինտրոդուկցվել է Հայաստան մեր միջոցով՝ 2004թ. INRA-ի գենբանկից՝ Ֆրանսիայից:

3) էլիտային բույսերի ստացման տարին՝ 2009թ.

4) փոքր կայանային փորձարկման տարիները՝ 2016-2018թթ.

5) մրցույթային կայանային փորձարկման տարիները՝ 2019-2021թթ.

6) միջկայանային մրցույթային սորտափորձարկման տարիները՝ 2022-2023թթ.

Սորտի համառոտ նկարագրությունը

Սերմերի ծլումից մինչև առաջին բերքահավաքը կամ պտուղների տեխնիկական հասունացումը տևում է 98 օր, պտուղների կենսաբանական հասունացումը՝ 118 օր, իսկ վեգետացիայի ավարտը՝ 78 օր: Թփի բարձրությունը կազմում է 145,5 սմ: Ծաղկած և պտղաբերող բույսերը շատ գեղեցիկ են: Այս սորտը արտաքինից շատ գեղեցիկ է և առաջարկվում է մշակել դեկորատիվ նպատակներով օգտագործելով վնասատուների դեմ, որպես բռնիչ բույս էթնոդեկորատիվության մեջ՝ որպես դեկորատիվ, իսկ բադրիջանի սելեկցիայում՝ որպես դոնոր՝ վաղահասության, ցրտադիմացկանության հատկանիշների

փոխանցման ուղղությամբ: Բերքատվությունը կազմում է 380,5 g/հա: Կանաչ պտուղները դառն են, խորհուրդ չի տրվում ուտել, իսկ կարմիր պտուղները՝ հյութալի են, մորու կամ բալի համով, կարելի է կարմիր պտուղը սեղմելով սերմերը հանել, լվանալ և որպես դելիկատես մի քիչ ճաշակել: Պտուղները պարունակում են 9,2% չոր նյութեր, 4,2% շաքարներ, 6,55մգ% վիտամին “C”, “B” խմբի վիտամիններից՝ թիամին(B1)՝ 4.33 մկգ/մլ, պիրիդոքսին(B6)՝ 10.28 մկգ/մլ, պանտոտենաթթու(B5)՝ 110.45 մկգ/մլ, նիկոտինաթթու(PP)՝ 70.95 մկգ/մլ, ինոզիտոլ(B8)՝ 3685.2 մկգ/մլ, 0,42% տիտրվող թթվություն և կանաչ պտուղներում՝ 4,67 (զանգվածային %), կարմիր պտուղներում՝ 7,63 (զանգվածային%) անթոցիաններ: Համեմատաբար դիմացկուն է միջավայրի շոգ պայմանների, տարածված հիվանդությունների և վնասատուների նկատմամբ:



Նկար 1. Սորտի մորֆոլոգիական հատկանիշները (զանգվածային պտղաբերման շրջանում)

1. **Սածիլների գույնը՝** կանաչ է, առատ փշերով
2. **Բույսի թուփը՝** միջին բարձրությունը՝ սկսած՝ 120,5սմ մինչև 145,9սմ Ձևը՝ հավաք, բարձրաբուն
Թփի միջին լայնությունը՝ սկսած՝ 90,8սմ մինչև 105,8սմ
Գույնը՝ կանաչ, առատ փշերով
Տերևակալությունը՝ ուժեղ
Ցողունը թավոտ է, առատ փշակալված
3. **Տերևի ձևը՝** խոր կտրտված ձվաձև, միջին չափի, առատ փշակալված
Թավոտությունը՝ միջին չափի
Տերևների եզրերը՝ խոր կտրտված
Տերևաթիթեղի գունավորումը՝ կանաչ
4. **Ծաղիկը:** Ծաղկաբույլում ծաղիկների թիվը՝ 10 հատ
Ծաղկապսակի գույնը՝ սպիտակ, երկնագույն երանգով
5. **Բաժակը:** Փշերը առկա են
Գույնը՝ բաց կանաչ
6. **Պտուղը:** Դիրքը՝ հողին չի կաշում
Թիվը բույսի վրա ամենաշատը >15
Ձևը՝ գնդաձև
Մակերեսը՝ փայլուն
Չափը՝ միջին երկարությունը (սմ) սկսած՝ 1,1 սմ մինչև 1,5
Միջին լայնությունը ամենալայն մասում (սմ)՝ սկսած 1,0-1,4
Ձևի ինդեքսը (երկարությունը) միջինը՝ 1,1-1,0

7.Պտղամսի գույնը՝ դեղնասպիտակ

Պտղամսի խտությունը՝ միջին

Համը՝ քիչ դառը

Մաշկը՝ նուրբ

8.Պտղի գույնը՝ տեխնիկական հասունացման փուլում՝ կանաչ

կենսաբանական հասունացման փուլում՝ կարմիր

Պտղամաշկը՝ կարմիր

Քաշը (գ)՝ 10-12

Սերմերի քանակը՝ քիչ. մեկ պտուղը պարունակում է 40-50 հատ սերմ:

Սերմնաբուծության համար օգտագործվում են սուպերէլիտային և էլիտային սերմնանյութ, որոնց ստացման տեխնոլոգիան համընդհանուր է՝ սմբուկի համար նախատեսված մեթոդական ցուցումներով: Սերմնաբուծության համար նախընտրելի գոտիները՝ Արարատ, Արմավիր, Տավուշ, Վայոց ձոր, Արագածոտն, Սյունիք:

Եզրակացություն

Սորտը նորույթ է մեր հանրապետությունում, իր գերվաղահասությամբ և ցրտադիմացկանությամբ առաջին է բաղրիջանի գենոֆոնդի մեջ: Առաջին անգամ առաջարկվում է սովորական մշակովի բաղրիջանների հետ նոր տեխնոլոգիայով համատեղ, ինչպես նաև որպես դեղաբույս և դեկորատիվ բույս մշակելու համար:

Այս սորտը մշակության համար առաջարկվում է հանրապետության բոլոր մարզերում և գոտիներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Svein Ø. Solberg. GLOBAL STRATEGY FOR THE CONSERVATION AND USE OF EGGPLANTS. ECPGR/Global Trust, 2025
2. Mamedov M I, Lushnaya O N, Jos E A, Schmykova N A, Suprunova T P, Mitrofanova O A and Verba V M. //Eggplant (Solanum SPP) (Moscow: VNISSOK Publishing House), 2015, 264 p.
3. Pivovarov V.F., Mamedov M.I., Bocharnikova N.I. Solanaceae crops: Tomato, Pepper, Eggplant, Physalis, M., 1998, p. 293
4. Marie-Cristine Daunay, Willem van Doijeweert, Lorenzo Maggioni. Solanaceae Genetic Resources in Europe. //SOL Newsletter, Issue Number 12, 2006, p. 1-2
5. Sarikyan K .M., Grigoryan M. G., Akopyan E. A., Zurabyan A. K. and Martirosyan G. S. Selection of miniature varieties of Solanaceae crops in Armenia. //ESDCA-II-2022, IOP Conf. Series: Earth and Environmental Science 1045 012093, IOP Publishing, 2022 DOI: //doi.org/10.1088/1755-1315/1045/1/012093
6. Методические указания по изучению мировой коллекции посленовых овощных культур. ВИР, Л., 1968, 12 с.
7. Svein Ø. Solberg, Mohamed T. Rakha, Dalia I. Taher, Jaime Prohens, Bob Jarret, Chithra Devi Pandey, Willem van Dooijeweert, Chithra Devi Pandey, Maarten van Zonneveld, and Peter Giovannini //Global Strategy for the Conservation and Use of Eggplants, The Crop Trust, Bonn, Germany, 2022 DOI: <https://doi.org/10.5281/zenodo.7575464>, <https://www.croptrust.org>
8. IPGRI, AVRDC and CATIE. Descriptors for Eggplant (Solanum L). 1990.
9. Dolores R. Ledesma. Experimental Design, Analysis of Variance IRRISTAT, AVRDC, Taiwan, 2006, p.15
10. Методика полевого опыта в овощеводстве и бахчеводстве (Под редакцией В.Ф. Белика и О.А. Бондаренко), Москва. 1979
11. Петербургский А. В. Практикум по агрохимической химии. 6-ое изд. доп. и перераб. М., Колос, 1968, 496с.
12. Giusti MM, Wrolstad RE. Characterisation and measurement of anthocyanins by UV-visible spectroscopy. Curr. Protoc. Food Anal. Chem. 2001, F1.2.1-F1.2.13. DOI: <https://doi.org/10.1002/0471142913.faf0102s00>